

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԽԱՉԱՏՐԵԱՆ ԲԱԳՐԱՏ ՀԱՅԱԿԻ

ԵԽԻՆՈԿՈՎՈՅԻ ԹՐԹՈՒՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՇՈՐ ԵՎ ՄԱՆՐ ԵՂՋԵՐԱԿՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՄԻ ԵՎ
ԵՆԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՄՆԱԿՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՎՐԱ

4.00.13 - «Մակարուծաբանություն» մասնագիտությամբ անասնաբուժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ХАЧАТРЯН БАГРАТ АМАЯКОВИЧ

ВЛИЯНИЕ ЛАРВАЛЬНОГО ЭХИНОКОККОЗА НА
ПИЩЕВУЮ ЦЕННОСТЬ МЯСА И СУБПРОДУКТОВ
КРУПНОГО И МЕЛКОГО РОГАТОГО СКОТА

Ա Վ Տ Օ Ր Ե Փ Ե Ր Ա Տ

диссертации на соискание ученой степени кандидата ветеринарных наук
по специальности 03.00.13 - «Паразитология»

ԵՐԵՎԱՆ - 2014

Ասենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում

Գիտական դեկավար՝

անասնաբուժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ.Արքահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Վ.Ա.Ղավիղյանց,
կենսաբանական գիտությունների
թեկնածու Օ.Վ.Շչերբակով

Առաջատար կազմակերպություն՝

«ՄԱՆԴԱՅՐԵԿ անվտանգության ոլորտի

ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 3-ին, ժամը 16.00-ին

ԲՈՀ-ի 035 բուսաբանության և կենդանաբանության մասնագիտական
խորհրդում:

Դասեւ՝ 0014, ք. Երևան, Պարույր Սևակի 7, էլ.փոստ: zoohec@sci.am

Ասենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գրադարանում, իսկ սեղմագրին՝ նաև
www.sczhe.sci.am կայքում:

Սեղմագրին առաքված է 2014թ. ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար, կ.գ.թ.

Ա.Վ. Ղուկասյան

Тема диссертации утверждена

в Научном центре зоологии и гидроэкологии НАН РА

Научный руководитель:

доктор ветеринарных наук, профессор

Վ.Վ. Абрамян

Официальные оппоненты:

докт. биол. наук, профессор **Վ.Ա. Դավիդյան**,

канд. биол. наук **Օ.Վ. Շերբակով**

Ведущая организация: ГНКО «Научный центр оценки и анализа рисков
безопасности пищевых продуктов»

Защита диссертации состоится 3-го июня 2014г. в 16.00 час.

на заседании специализированного совета 035 по ботанике и зоологии ВАК РА.

по адресу: г. Ереван, 0014, ул. П. Севака 7, эл. почта: zoohec@sci.am

С диссертацией можно ознакомиться в библиотеке Научного центра зоологии и
гидроэкологии НАН РА, а с авторефератом - также на сайте www.sczhe.sci.am
Автореферат разослан 30-го апреля 2014 г.

Ученый секретарь специализированного совета,

канд. биол. наук

Ա.Գ. Ղուկասյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի պրոխականությունը: Ազգաբնակչության կյանքի մակարդակի բարձրացումը պահանջում է բարձրորակ սննդային մթերքների, հատկապես մսի արտադրության տենայի արագացում, քանի որ միսն ու մսամբերքները իրենց սննդային հատկություններով առավել լիակատար են համապատասխանում մարդու օրգանիզմի կենսաբանական պահանջներին: Անասնաբուժական մթերքներով բնակչության ապահովումը գյուղատնտեսության բնագավառում աշխատողների, այդ թվում նաև անասնաբուժների գլխավոր խնդիրներից մեկն է:

Հայաստանում տավարարությունը և ոչխարաբուծությունը անասնաբուժության կարևորագույն ճյուղերից են, քանի որ տավարի և ոչխարի միսը և ենթաճերքները իրենց համային հատկանիշներով և կալորիհականությամբ ուրույն տեղ են զբաղեցնում մեր հանրության ճաշացանկում: Տավարի և ոչխարի մսերիներու պարունակում են մարդու օրգանիզմի ածի ու կենսագործունեության համար անհրաժեշտ սպիտակուցները, ճարպերը, մակրո-, միկրոտարրերը, վիտամինները և այլն:

Սակայն տավարի և ոչխարի մսի արտադրության բարձրացման գործնարարությունը առևկա են նի շարք խոշընրությունը, որոնցից են տարբեր ինվազիոն հիվանդությունները, մասնավորապես էխինոկոկոզը:

Այս հելիճներովն ունի լայն տարածում անբողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում պատճառելով մեծ տնտեսական վնաս գյուղատնտեսությանը, թերև արդյունաբերությամբ ու առողջապահությամբ:

Էխինոկոկոզի խնդիրն բազմաթիվ գիտական աշխատանքներ են նվիրել ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան գիտնականները: Սակայն այդ աշխատանքների հեղինակները սահմանափակվել են միայն էխինոկոկոզի կողմից պատճառած տնտեսական վնասի, տարածվածության, օրգանիզմում տեղի ունեցող կազմաքանական, ինուն-կենսաթիմիական, սպիտակուցային փոխանակման խախտման, վիտամինների քանակական նվազման ուսումնասիրություններով: Առողջ և էխինոկոկոզով հիվանդ կենդանիներից ստացված սպամիային մթերքների կենսաբանական լիարժեքության տարբերության վերաբերյալ ոչինչ չի ասված:

Ներկայում սպամիային մթերքների նկատմամբ անասնաբուժական սանհիտարական փորձաքննություն իրականացնելիս մասնագետները սահմանափակվում են անվտանգության հարցերով՝ անտեսելով այն հանգամանքը, որ մակարությունը իրենց կենսագործունեությամբ բավականաչափ բացասական ազդեցություն են թողնում մթերքի քիմիական կազմի վրա հշեցնելով նրա սննդային արժեքը, կալորիհականությունն ու կայունությունը պահմանման ժամանակ:

Էխինոկոկի բշտերի ազդեցությունը տավարի և ոչխարի մսի և ենթաճերքների որակի վրա գործել ուսումնասիրված չի:

Ենթազուությունների նպատակը և խնդիրները: Էխինոկոկոզի հարուցիչը իր վտանգավոր ազդեցությունը միջանկալ տիրոջ օրգանիզմի վրա թողնում է զարգացման թրթուրային փուլում, որի ընթացքում գյուղատնտեսական կենդանիների, մարդկանց ներքին օրգաններում (լյարդ, թոքեր, երիկամներ, ուղեղ) զարգանում են էխինոկոկային բշտեր:

Գյուղատնտեսական կենդանիների օրգանիզմի վրա էխինոկոկոյի բացասական ազդեցության մասին առևկա են բազմաքանակ և բազմատեսակ գիտական աշխատանքներ: Սակայն նույնը չի կարելի ասել այդ կենդանիներից

ստացված սպանդային մթերքների որակի նկատմամբ կատարած հետազոտությունների մասին:

Ելենով ննան իրավիճակից՝ մեր առջև նպատակ դրեցինք հետազոտել է խինոկողով վարակված խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների մսի և ենթամթերքների (սարդ, թոքեր) սննդային արժեքը:

Նշված նպատակին հասնելու համար նախատեսվել է ուսումնասիրել.

- մսեղիքի զգայորոշման հատկությունների փոփոխություններն առողջ և վարակված կենդանիների մոտ
- մսի հասունացումը պայմանավորող ցուցանիշների փոփոխությունն առողջ և էխինոկողով վարակված խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների մսում
- խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների մսեղիքի սննդային արժեքը և կալորիհականությունը
- մսի մանրէարանական աղտոտվածությունը
- ենթամթերքների զգայորոշման հատկությունների փոփոխություններն առողջ և վարակված կենդանիների մոտ
- կարնաթքվի և թH-ի փոփոխություններն առողջ և էխինոկողով վարակված խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների ենթամթերքներում
- առողջ և էխինոկողով վարակված տավարի և ոչխարների ենթամթերքների սննդային արժեքը
- Էխինոկողով վարակված խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների ենթամթերքներում:

Աշխատանքի գիտական նորույթ: Յայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժական սանհիտարական փորձաքննության և զողոհիգիենայի ամբիոնի կոլեկտիվը պրոֆեսոր Վ. Վ. Աբրահամյանի ղեկավարությամբ շուրջ 20 տարի շարունակ, որպես գիտական ուղղվածություն, ընտրել է հելմինթների բացասական ազդեցության ուսումնակիրությունը կենդանիների սպանդային մթերքների որակական ցուցանիշների վրա: Այս առումով արդեն հետազոտվել և համապատասխան առաջարկություններ են արվել ստամոքսաղիքային հելմինթոզներով, թռօթիճիգային հիվանդություններով, ֆասցիուզով և դիկրոցելյոզով վարակված կենդանիներից ստացված սպանդային մթերքների նկատմամբ:

Շարունակելով ուսումնասիրվող թեմատիկան՝ մեր կողմից ընտրվեց շատ տարածված, բայց այդ առումով թերի ուսումնասիրված էխինոկողով հելմինթոզը:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջն անգամ մեր ուսումնասիրությամբ որոշվել է էխինոկողով հիվանդ խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների մսի ու ենթամթերքների որակը բնորոշող կարևոր ցուցանիշները՝ սննդային արժեքի և կալորիհականության նվազումը, քիմիական կազմի և հասունացման գործընթացի խախտումը, մանրէարանական աղտոտվածությունը և այլն:

Աշխատանքի գործնական նշանակություն: Յետազոտությունների ընթացքում ստացված տվյալները նորովի կարող են օգտագործվել էխինոկողով ախտահարված մսի և ենթամթերքների անասնաբուժական սանհիտարական գնահատման ժամանակ, այսինքն անասնաբույժ-փորձագետին հնարավորություն է ընձեռում սպանդային մթերքներին տալ ոչ միայն սանհիտարական գնահատական, այլև որոշել նրանց լիարժեքության աստիճանն

ու օգտագործման բնագավառը որպես սննդային մթերք: Նման մոտեցումն ունի խիստ կարևոր գործնական նշանակություն, քանի որ սպառնան համար նախատեսված մթերքի սանհիտարական գնահատականը կայացնելիս պետք է գերակայի ոչ թե շահութը, այլ մթերքի որակն ու անվտանգությունը:

Դետազուման արդյունքներն առավել արդյունավետ կարող են կիրավել գործոն «Կենդանիների մսի ու մսամթերքի անասնաբուժական սանհիտարական փորձարներություն կանոններում»:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Եխինոկոկոզով հիվանդ խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների սպանդային մթերքների սննդային արժեքի որոշման ուղղությամբ մեր կողմից կատարված հետազոտություններից պաշտպանությանն ենք ներկայացնում հետևյալ դրույթները:

- մսի, յարդի և թոքերի օգայորոշման և լաբորատոր հետազոտությունների արդյունքները
- մսի և ենթամթերքների հասունացումը պայմանավորող ցուցանիշների փոփոխությունը
- մսի և որոշ ենթամթերքների սննդային արժեքն ու կալորիխականությունը
- մսի և ենթամթերքների մանրեային աղտոտվածությունը
- առաջարկություններ սպանդային մթերքների փորձաքննության և սանհիտարական գնահատման բարելավման ուղղությամբ:

Աշխատանքի փորձագնահատում: Ասենախոսության արդյունքները գեկուցվել և ընարկվել են ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական խորհրդի միստերում (2011-2013 թթ.), ինչպես նաև “Биологическое разнообразие и проблемы охраны фаянсы Кавказа” (Երևան, 26-29 սեպտեմբերի, 2011 թ.) միջազգային գիտաժողովում:

Քրատորակված գիտական աշխատանքները: Ասենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները ամփոփված են հրատարկված 4 գիտական հոդվածներում:

Ասենախոսության կարուցմանը և ծավալը: Ասենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքով 105 էջի վրա և բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (գրականության ակնարկ, հետազոտությունների նյութ և մեթոդներ, սեփական հետազոտություններ, արդյունքների քննարկում և անվիճում), եզրակացությունից և առաջարկություններից: Ասենախոսությունը պարունակում է 10 գծանկար, 9 աղյուսակ, 8 նկար և 1 սխեմա: Գրականության ցանկում նշված են 171 հայագի և արտասահմանյան հեղինակների գիտական աշխատանքներ:

1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԽԱՐԿ

Այս գիտում ներկայացված են քննարկվող թեմային էխինոկոկոզի խնդրին, Վերաբերող առկա գրական տվյալները. Էխինոկոկոզի հասցրած տնտեսական վնասի, տարածվածության, օրգանիզմում տեղի ունեցող կազմաբանական, իմունո-կենսաքիմիական, սպիտակուցային փոխանակման, վիտամինների պարունակության վերաբերյալ:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Առենախոսության աշխատանքներն իրականացվել են 2008-2013 թ. «Յանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդամթերքի անվտանգության հետազոտությունների լաբորատորիայում (Անդային արժեքի, հասունացման գործընթացի, մանրէաբանական ախտոտվածության որոշում) և Յայաստաճի ազգային ագրարային համալսարան հիմնարարմի անասնաբուժական սանիտարական փորձաքննության և զոհիկենայի ամբիոնում (մսի և ենթամթերքների զգայորոշման ցուցանիշների որոշում):

Ուսումնասիրությունների համար նյութ են հանդիսացել Երևան քաղաքի տարբեր չուկաների անասնաբուժասանիտարական փորձաքննության լաբորատորիաներից, բակային սպանդահրապարակներից, մսամթերքի վաճառքի կետերից, անասնապահական մթերքների փորձաքննություն իրականացնող ՄՊԸ-ներից ծեռք բերված էխինոկոկով վարակված և առողջ խոշոր եղջերավոր կենդանիների և ռչսարների մսի, թրթերի և յարող նմուշները: Աշխատանքում ընդգրկվել են 50-ական էխինոկոկով վարակված և առողջ խոշոր եղջերավոր կենդանիների, ինչպես նաև 40-ական էխինոկոկով վարակված և առողջ ռչսարների մսի, յարողի և թրթերի նմուշների ուսումնասիրություններ:

Նմուշները վերցվել են ձեռնոցներով, դրվել հատուկ պոլիեթիլեֆանյին նմուշառման տոպարակների մեջ: Նմուշները գրանցվել են առանձին գրանցամատյանում, տրվել է նույնականացման համարը, նշվել սպանոի ենթարկված կենդանիների տեսակը, տարիքը, բուվածության աստիճանը, պահկածքը և անասնատիրոջ տվյալները: Նմուշները պահվել են սառնարանային (+4+6⁰C) պայմաններում: Մսեղիքի նմուշները վերցվել են սպանոից 2-4 ժամ հետո +15+25⁰C պայմաններում՝ կախված եղանակային պայմաններից:

Սսի զգայորոշման հետազոտությունները կատարվել են «ԳՕСՏ 7269-79»-ի 1980 թ., № 1560-Ն «Մսի և նսամթերքի տեխնիկական կանոնակարգ»-ի 19.10.2006 թ. համաձայն: Պեղորսիդազայի ակտիվության փորձը կատարվել է ըստ Գ.Վ.Կոլոբրուտսկու (1966) նկարագրած մեթոդի: Սպիտակուցմերի քանակությունը որոշվել է համաձայն ԳՈՍ 25011-ի (1981):

Կաթնաթթվի քանակությունը որոշվել է ուլտրամանուշակագույն սպեկտրոֆուստոմետրի միջոցով (2011), ճարպերինը համաձայն ԳՈՍ 23042-86-ի (1986): Մսիրի քանակության որոշումը կատարվել է ըստ Խ.Ս.Գորեգյանի և ուր. մեթոդի (1981) մոլեյլային վառարանում այրելու միջոցով: Սսի նմուշներում կալորիհականությունը որոշվել է հաշվարկման մեթոդով: Սսի միջավայրի թթվայնությունը՝ pH-ը, որոշվել է համաձայն Գոստ 51478-99-ի (1999): Մսի և ենթամթերքների խոնավությունը որոշվել է Գոստ 51479-99-ով (2006): Մսի մեջ ՍԱՖԱՄ-ը (մեղոֆիլ աերոր, ֆակուլտատիվ անաերոր մանրէներ) որոշվել է ըստ Գոստ 10444.15-94-ի (1994), ԱՑԽՄ-ն (աղիքային

ցուպիկի խմբի մանրէներ՝ ըստ ԳՈՍ 30519-97-ի (1997), ախտածին, այդ թվում՝ *Salmonella* spp. և *Listeria monocytogenes*-ի հարուցիչները՝ ըստ 4.2.1122-02 մեթոդական ցուցումի (2002):

Դետագոտությունների արդյունքների վիճակագրական մշակումը կատարվել է կենսաչափական համապատասխան մեթոդների օգնությամբ (Снедекор, 1961):

3. ՍԵՓԱԿԱՆ ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ՍԵԼԵՋԻԹԻ ՋԳՎԱՅՐՈՂՄԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՊԻԼԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջգայրողությունը սննդամբերը որակի գնահատման առավել տարածված միջոց է, որն իրականացվում է ջգայական օրգանների ընկալման վերլուծությամբ և շատ արագ ընդհանուր պատկերացում է տալիս նրա որակի մասին: Երբեմն ջգայրողման անալիզն իր ճշտությամբ գերազանցում է լաբորատոր հետազոտություններին և քիչ չեն դեպերը, երբ մթերքի սանիտարական գնահատումը կայացվում է միայն ջգայաբանական հետազոտությունների արդյունքների հիման վրա:

Ցիցի կազմակերպված ջգայաբանական անալիզն անփոխարինելի է, եթե որոշվում է սպանդային մթերքի արտաքին տեսքը, մսելիքի բտվածությունը, հոտը, համը, արյունաքամության աստիճանը և այլն:

Սա է պատճառը, որ սպանդային կենդանիների մսի և ենթամթերքների սննդային արժեքի յուրաքանչյուր հետազոտությունից առաջ կատարել ենք նրանց ջգայրողման ցուցանիշների որոշում, որոնց արժեքների ճշտությունն ու հավաստիությունը կախված է նաև փորձարկումների կատարելու պայմաններից: Դետազոտությունները իրականացրել ենք Յայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժասանիտարական փորձաքննության և զողովիկինայի ամբիոնի լաբորատորիայում: Փորձագիտական ուսումնասիրությունները կատարել ենք $18\text{--}20^\circ \text{C}$ ջերմաստիճանի, $70\text{--}75\%$ հարաբերական խոնավության, լավ լուսավորության և կողմնակի հոտերից գործ պայմաններում:

Դետազոտության առարկա են հանդիսացել էսինոկոկոզով հիվանդ և առողջ տավարի ու ոչխարների միսը, որի նկատմամբ կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները՝ արտաքին տեսքը, չորացման կեղլի վիճակը, գույնը (կախված արյունաքամության աստիճանից), հոտը, խտաստիճանը, ինչպես նաև արգանակի գոլորշու հոտը, թափանցիկությունը, ճարպագնդիկների առկայությունը ու փարթամությունը:

Ջգայրողնամբ ստացված արդյունքներն առավել ճշգրիտ դարձնելու նպատակով կատարել ենք նաև պերօքսիդազայի և ֆորմալինային փորձերը, որոնք խոշոր գործնական նշանակություն ունեն մթերքի որակի որոշման, ինչպես նաև հիվանդ էսինոկանների մսի հայտնաբերման գործում:

Ստացված տվյալները պատկերված են աղյուսակ 1-ում:

Ի տարբերություն առողջ էսինոկոկով վարակվածների արյունաքամությունը ոչ թե «լավ» է, այլ «բավարար», որը հաստատվում է ֆիլտրաբղդի խոնավացմաբ ու նրա վրա առաջացած գունավոր հետքերով:

Աղյուսակ 1

Եխմոնկուղղով վարակված և առողջ խոշոր եղթերավոր կենդանիների և
ոչխարների մսի զգայորոշման ցուցանիշների փոփոխությունները

Ցուցանիշները	Տավար		Ոչխար	
	առողջ	վարակված	առողջ	վարակված
Մսեղիքի գույնը և արտաքին տեսքը, չորացման կեղկն ու արյունաքամու թան վիճակը	Մսի գույնը կարմիր է, արյունաքամությոն մը լավ է կատարված, կտրվածքի մեջ գետեղված ֆիլտրաբությունը խոնավացած չէ և քացակայում են գունավոր բծերը, չորացման կեղկն լավ է արտահայտված	Մսի գույնը ճուղաց կարմիր է, արյունաքամությունը մը բավարար (ֆիլտրաբությունը խոնավացած է, իսկ նրա մակարեսին մկատվում են մանր վարդագոյն բծեր), չորացման կեղկնը ուշացումով է ձևավորվում	Մսի գույնը բավակարմիր է, արյունաքամությունը մը լավ է կատարված, կտրվածքի մեջ գետեղված ֆիլտրաբությունը խոնավացած չէ, և քացակայում են գունավոր բծերը, չորացման կեղկն լավ է արտահայտված	Միաբ տեղ-տեղ բավակարմիրավուն է, արյունաքամությունը նը բավարար (ֆիլտրաբությունը խոնավացած է, իսկ նրա մակարեսին մկատվում են մանր վարդագոյն բծեր), չորացման կեղկնը ուշացումով է ձևավորվում
Խտաստիճամբ	Կտրվածքում միսն ամուր է, ձիգ, մատով սեղմելին առաջացած փոսիկը արագ է վերականգնման	Կտրվածքում միսն ամուր է, ձիգ, մատով սեղմելին առաջացած փոսիկը դանդաղ վերականգնման	Կտրվածքում միաբ ամուր է, ձիգ, մա- տով սեղմելիս առաջացած փոսիկը արագ վերա- կանգնման	Կտրվածքում միաբ ամուր է, ձիգ, մա- տով սեղմելիս առաջացած փոսիկը հանդադ է վերա- կանգնման
Հոտը	Դոլրեկան է, բնորոշ տավարի մսին	Դոլրեկան է, բնորոշ տավարի մսին	Դոլրեկան է, բնորոշ ոչխարի մսին	Դոլրեկան է, բնորոշ ոչխարի մսին
Արգանակի թափանցիկությունը	Արգանակը թափանցիկ է, մեծ քանակությամբ փարթամ ճարպագնդիկներ ուն, գոլորշու հոտը դոլրեկան	Արգանակը թափանցիկ է, գոլորշու հոտը դոլրեկան, արգանակի մակարեսին մկատվում են թիչ քանակությամբ մանր ճարպագնդիկներ	Արգանակը թափանցիկ է, մեծ քանակությամբ փարթամ ճարպագնդիկներով	Արգանակը թափանցիկ է, գոլորշու հոտը դոլրեկան, արգանակի մակարեսին մկատվում են թիչ քանակությամբ մանր ճարպագնդիկներ
Պերօքսիդազա յի փորձ	Կապտականաշա վուն գունավորում	Կապտականաչ գունավորումը թույլ է ար- տահայտված և արագ անհետանում է	Ի հայտ է գալիս կապտա- կանաչավուն գունա- վորում	Կապտականաշավո ւն գունավորումը ուշ է առաջանուն և շատ թույլէ արտահայտված
Ֆորմալինային փորձ	Փորձանորի պարունակյալը մնում է անփոփոխ	Փորձանորի պարունակյալը ծեռք բերել պիտորություն: Առկա են խոշոր փաթիլներ	Փորձանորի պարունակյալը մնում է անփոփոխ	Փորձանորի պարունակյալը ծեռք է բերել պիտորություն: Առկա են խոշոր փաթիլներ

Զգայորոշման ցուցանիշները հաստատող և լրացնող պերօքսիդազայի և ֆորմալինային փորձերի արդյունքները ևս վկայում են մսի որակական ցուցանիշների վատացման մասին:

Անյօւսակի տվյալներից երևում է, որ առողջ կենդանիների մսում պերօքսիդազա ֆերմենտի ակտիվությունը բավականին բարձր է, և փորձանոթի մակերեսին լողում են թիզ քանակությամբ մաճը ճարպագնդիկներ:

Չորացման կեղար ուշացումով է ձևավորվում, իսկ արգաճակի պարունակյալը ձեռք է բերում կապտականաչափուն գունավորում (դրական ռեակցիա), այնինչ էսինոլկողով հիվանդների մսում պերօքսիդազայի ակտիվությունը զգալի չափով նվազում է, իետևաբար կապտականաչափուն գունավորման փոխարեն փորձանոթի պարունակյալը ընդունում է գորշավուն երանգ (բացասական ռեակցիա):

Ինչ վերաբերում է ֆորմալինային փորձին, ապա նույն այցուսակից երևում է, որ ստուգիչ խմբի նմուշների դեպքում արդյունքը բացասական է, փորձանոթի պարունակյալը ձեռք է բերել պղտորություն, հայտնաբերվել են մեծ քանակությամբ ձյան տեսքի խոշոր փաթիլներ:

3.2. Սսի հասունացումը պայմանավորող ցուցանիշների փոփոխությունն առողջ և էսինոլկողով վարակված խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարմերի մսի մեջ

Սսի հասունացման ճիշտ գործընթացով է պայմանավորված նրա սննդային արժեքը և պահպանման տևողությունը: Սսի հասունացումը բարդ կենսաքիմիական գործընթաց է, որի ցանկացած բաղադրիչի փոփոխություններ, որոնք խախտում են հասունացման գործընթացը՝ կտրուկ նվազեցնելով մսի որակը, սննդային արժեքն ու պահպանման տևողությունը:

Մակարության շատ հիվանդությունների ժամանակ, ինչպիսիք են ֆասցիոնոզը, դիկրոցեյոնզը, ստամոքսալիքային նեմատոդոզները, մսի մեջ տեղի են ունենում ֆիզիկա-քիմիական և կենսաքիմիական ցուցանիշների փոփոխություններ, որոնք խախտում են հասունացման գործընթացը՝ կտրուկ նվազեցնելով մսի որակը, սննդային արժեքն ու պահպանման տևողությունը:

Ելենլով վերը նշվածից մենք նպատակադրվեցինք պարզել էսինոլկողի բացասական ազդեցության աստիճանը խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարմերի մսի հասունացման վրա:

Սսի բուն հասունացումը պայմանավորված է մկանային գլիկոգենի արագընթաց տրոհմանը և կարնաթրվի գոյացմանը: Հայտնի է, որ կենդանու սպանդից հետո դադարում է թթվածնի մուտքը դեպի մկանային հյուսվածքի թջիններ, որի պատճառով գլիկոգենի սինթեզը կանգ է առնում, իսկ եղած գլիկոգենը սկսում է քայրայվել և մի շարք փոխակերպումներից հետո վերածվում է կարնաթրվի, որն էլ կուտակվում է մկանային հյուսվածքներում: Երբ մսի մեջ կուտակվում է զգալի քանակությամբ կաթնաթրու, գլիկոլիզի գործընթացը լրիվ դադարում է: Միաժամանակ ֆոսֆորային միացություններից անջատվում և կուտակվում է ֆոսֆորական թթու: Նշված թթուների գոյացման իետևանքով մսում ավելանում է ջրածնային իոնների քանակությունը, և 24 ժամ անց մսի pH-ը դաշնում է 5,6:

Բանի որ մսի հասունացման գործընթացում կարևորագույն բաղադրիչներից են համարվում գլիկոգեն ածխաջրատն ու ջրածնային իոնների կոնցետրացիան (pH-ը), ուսումնասիրեցինք առողջ և էսինոլկող վարակված տավարի և ոչխարի մսի կաթնաթրվի քանակն (%) ու pH-ի

մեծությունը: Հետազոտությունների արդյունքները գետեղված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Կարնաթթվի և pH-ի փոփոխություններն առողջ և էխինոկոլոզով վարակված խոշոր եղջերավոր կրնամիմերի և ոչխարի մսում ($M \pm m, P<0,005$)

Ցուցանիշները	Տավարի միա (n=50)		Ոչխարի միա (n=40)	
	առողջ	վարակված	առողջ	վարակված
Կարնաթթվի քանակությունը %	0,88±0,03	0,5±0,04	0,83 ± 0,06	0,44 ± 0,11
Մսի մզվածքի pH-ը	5,92±0,37	7,36 ± 0,18	5,85±0,45	7,56 ± 0,35

Աղյուսակից երևում է, որ առողջ տավարի մկաններում կարնաթթվի պարունակությունը կազմել է 0,88%, իսկ ոչխարների՝ 0,83%, այնինչ՝ էխինոկոլոզով վարակվածների մսում այն եղել է համապատասխանաբար 0,5% և 0,44%: Գլիկոգենի քայլայման հետ մեկտեղ փոփոխման ենթարկվեց մսի միջավայրի ռեակցիան: Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից, ստուգիչ խմբի մսի pH-ը 5,8-5,9 է, որը բացատրում ենք գլիկոլիզի փուլում արտազատված թթուների կուտակմամբ, իսկ փրկօնական խմբի նմուշներում տավարի մսի pH-ը կազմել է 7,36 և ոչխարների նմուշներում՝ 7,56: Այս հանգամանքը չի կարող չագղել պրոտեոլիտիկ և ավտոլիտիկ գործընթացների վրա, որոնք խախտում և առաջանաւում են անդառնալի փոփոխություններ՝ նպաստելով մսեղիքի որակագրվածմանը:

Մեր հետազոտությունների արդյունքներից պարզ դարձավ, որ էխինոկոլոզով վարակված խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների մսի հասունացումը մակերեսորեն է ընթանում, որը նպաստում է հիմնային միջավայրի գոյացմանը:

3.3. Խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների մսեղիքի սմնդային արժեքը և կալորիականությունը

Մսի սմնդային արժեքը, տեխնոլոգիական հատկությունները և որակը կախված են կենդանատեսակից, հասակից, սեռից, բովածության աստիճանից, նախասպանդային պահվածքից, հետսպանդային փոփոխություններից, առողջական վիճակից և այլ գործոններից:

Դաշվի առնելով մսեղիքի սմնդային արժեքի կարևորությունը, հետազոտություններ ենք իրականացրել մսի սմնդային արժեքը պայմանավորող ցուցանիշների՝ խոնավության, սպիտակուցների, ճարպերի, մոխրի և կալորիականության պարզաբանման ուղղությամբ: Հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Մեղիքի սննդային արժեքի ցուցանիշները
($M \pm s$, $P < 0,005$)**

ճիշտակար	Խոնավություն %		Սպիտակուց, %		ճարպ, %		Մոխիր, %		Մսի կալորիականու- թյուն, կվալ,	
	առողջ առողջ	մոխիրաց մոխիր	առողջ պարակած	պարակած վարակված	առողջ առողջ	մոխիրաց մոխիր	առողջ պարակած	մոխիրաց մոխիր	առողջ պարակած	մոխիրաց պարակած
սովորի (n=50)	67,3 \pm 0,38	73,48 \pm 0,41	18,79 \pm 0,18	14,8 \pm 0,1	12,37 \pm 0,04	10,19 \pm 1,32	0,97 \pm 0,05	0,78 \pm 0,02	125,2 \pm 0,22	100,3 \pm 1,42
ոչխարի (n=40)	67,4 \pm 0,19	76,06 \pm 0,55	16,03 \pm 0,26	12,05 \pm 0,29	15,07 \pm 0,22	12,34 \pm 1,46	0,78 \pm 0,02	0,68 \pm 0,02	124,0 \pm 0,48	97,5 \pm 1,75

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ էխինոկոկով վարակված տավարի մաս բոլոր ցուցանիշների համեմատությամբ ենթարկվել են անցանկալի շեղումների՝ խոնավությունն ավելացել է, կազմելով 67,3-73,48%, իսկ սպիտակուցները, ճարպերը, մոխիրը, կալորիականությունը նվազել են, համապատասխանաբար կազմելով 18,79-14,8 %, 12,37-10,19%, 0, 97-0,78%, և 125,2-100,3 կիլոկալորիա:

Էխինոկոկով վարակված ոչխարների մսում նույնպես տեղի է ունենում սննդային արժեքի ցուցանիշների փոփոխություններ առողջի համեմատ: Փորձական խմբի ոչխարների մսում խոնավությունը ստուգիչ խմբի համեմատ բարձրացել է և կազմել 64,7-76,06%, իսկ սպիտակուցները, ճարպերը, մոխիրը և կալորիականությունը նվազել են և համապատասխանաբար կազմել 16,03-12,05%, 15,07-12,34%, 0,78-0,68%, 124,0-97,5 կիլոկալորիա:

3.4. Մսի մանրէային աղտոտվածությունը

Միսը՝ որպես սպիտակուցային մթերք, հիմանալի միջավայր է հանդիսանում ախտածին մանրէների բազմացման ու կենսագործունեության համար: Դայտնի է, որ երբ կենդանու օրգանիզմի դիմադրողականությունը հիվանդությունների նկատմամբ բուլանում է, նեխային միկրոֆլորան աղիքներից թափանցում է մկանային հյուսվածքի և ներքին օրգանների մեջ՝ առաջացնելով միշտ ախտաբանական փոփոխություններ:

Ելենով վերը նշվածից՝ անհրաժեշտ ենք համարել կատարել էխինոկոկով վարակված տավարի և ոչխարի մսի մանրէային աղտոտվածության հետազոտություններ, քանի որ զգայորշման և

Ֆիզիկաքիմիական ցուցանիշների ուսումնասիրությունը բավարար չէ մսի սննդային արժեքը որոշելու և սանիտարական գնահատականը կայացնելու համար:

Փորձերն իրականացրել ենք՝ համաձայն 1560-Ն «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգ»-ի 2006թ. կառավարության որոշման: Սանրէարանական պահանջվող ցուանիշներից ուսումնասիրել ենք ՄԱՖԱՍ-ի, ԱՑԽԱ-ի, *Salmonella spp.*-ի և *Listeria monocytogenes*-ի առկայությունը մկանային հյուսվածքում: Դետագուտության արդյունքները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Մսի մանրէարանական ցուցանիշների փոփոխությունները

Մանրէարանական ցուցանիշներ	Ըստ նորմատիվի	Ստուգիչ	Փորձնական
ՄԱՖԱՍ, ԳԱՍ/գ	10	8	>300
ԱՑԽԱ (կոլի ծեր) 1 գ-ում	չ/թ	չ/հ	Դայտն. է (<i>E.coli</i>)
Ախտ. ա/թ <i>Salmonella</i> 25 գ-ում	չ/թ	չ/հ	չ/հ
<i>Listeria monocytogenes</i> 25 գ-ում	չ/թ	չ/հ	չ/հ

Ծանոթություն - չ/հ - չի հայտնաբերվել; չ/թ - չի թույլատրվում

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ստուգիչ խմբի կենդանիների նմուշներում հայտնաբերվել են հատուկենտ կոկեր, այնինչ՝ փորձնական խմբի նմուշներում բացահայտվել են տարբեր տեսակի մանրէներ: Այսպես, էխինոկոկով վարակված թթվաբերի, թթվաբարի, ոչ ոչխարի մսի նմուշներում ՄԱՖԱՍ-ի նկատմամբ կատարած հետազոտություններից երևաց, որ գաղտութ առաջացնող մանրէների քանակը գերազանցել է 300-ը, նկատվել է *E.coli*-ի գգալի աճ, իսկ *Salmonella spp.* և *Listeria monocytogenes* չի հայտնաբերվել:

Այսպիսով, էխինոկոկով վարակված կենդանիների մասում առկա է մանրէային աղյուսվածությունը, ինչն էլ ինքնըստիմքյան դաշնութ է սննդային արժեքի և որակի նվազեցնան պատճառ:

3.5. Ենթամթերքների գգայորոշմամ և լարորատոր հետազոտությունների արդյունքները

Սպանդային կենդանիների ենթամթերքները մեծ արժեք և պահանջարկ ունեն մսի արդյունաբերության և մեր համրության կողմից: Բավական է զշել, որ ենթամթերքների ելունքը մսի զանգվածի նկատմամբ տավարի մոտ կազմում է 22%, իսկ ոչխարների մոտ՝ 20%:

Ենթամթերքները պարունակում են մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ բազմաթիվ նյութեր և իրենց քիմիական կազմով ու համային հատկանիշներով գրեթե չեն զիջում մսին, իսկ B2 և B12 վիտամինների, երկարի, պղնձի և այլ միկրոտարբերի պարունակությամբ տավարի յարղը մի քանի անգամ գերազանցում է մսին:

Տարբեր մակարուցային հիվանդությունների դեպքում սպանդային կենդանիների ենթամթերքները ենթարկվում են կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխությունների, որոնց արդյունքում խախտվում է դրանց քիմիական կազմը:

Ենթամթերքների գգայորոշման ցուցանիշների ուսումնասիրություններն ավելի կարևոր են, քան նսինը, քանի որ տեսանելի ակնհայտ փոփոխությունները տեղի են ունենալու հենց ներքին օրգաններում, մասնավորապես յարդում և թոքերում: Էխինոկոկային բշտերը, տեղակայվելով ենթամթերքներում, գցում են դրանց ապահնքային տեսքը, խախտում են կազմաբանությունն ու ամբողջականությունը, նպաստում են ալերգիկ և թունավոր երևությունների դրսևորմանը: Հետևաբար, ենթամթերքների գգայորոշման ցուցանիշների հետազոտարքունքը չափազանց կարևոր է ճիշտ սանհիտարական գնահատական կայացնելու համար:

Հետազոտության արդյունքները արտացոլված են աղյուսակ 5-ում:

Ինչպես արտացոլված է աղյուսակում, առողջ և էխինոկոկով վարակված խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների յարդում ու թոքերում նկատվում են ակնհայտ տարրերություններ:

Այսպես, առողջ կենդանիների յարդն արտաքինից հարք է, փայլուն է, շագանակարավագույն, խտաստիճանը ամուր է, հոտը՝ բնորոշ տվյալ կենդանատեսակին:

Էխինոկոկերով վարակված կենդանիների յարդը արտաքինից անհարք է, փայլուն մակերեսով, չափերով մեծացած, շագանակագույն, էխինոկոկերի բշտերի շուրջ պարենքինիան պնդացած է, լեղածորանները լայնացած են և լցված լեղինով, առկա է թթվակի նեխսահոտ:

Առողջ կենդանիների թոքերը բաց վարդագույն են, խտաստիճանը՝ ամուր, հոտը յուրահատուկ է և բնորոշ տվյալ կենդանատեսակին:

Փորձնական խմբի կենդանիների թոքերում պատկերն այլ է՝ չափսերով մեծացած և բլրակապատ, գույնը կարմիր, էխինոկոկային բշտերը շրջապատող հյուսվածքը սեղմված է և ատրոֆիայի ենթարկված, հոտը՝ ոչ բնորոշ:

Աղյուսակ 5

**Էխինոկոկով վարակված խոշոր եղերավոր կենդանիների և ոչխարների յարդի,
թոքերի գգայորոշման ցուցանիշների փոփոխությունները**

Ցուցանիշները	Տավար/ Ոչխար		Տավար/ Ոչխար	
	Լյարդ		Թոքեր	
	առողջ	վարակված	առողջ	վարակված
Ենթամթերքների արտ. տեսքը, գույնը	Փայլուն է, շագանակարավ ագույն, մակերեսը հարթ	Լյարդը ծավալով մեծացած է, փայլուն մակերեսով, շագանակագույն, արտաքին մակերեսը անհարք է, բլրակապատ	Բաց վարդագույն, մակերեսը հարթ է	Մակերեսը մգացած է, կարմիր գույնի, վարակված թոքերը չափսերով մեծացած են և բլրակապատ
Խտաստիճանը	Պարենքինան ամուր է	Պարենքինան էխինոկոկերի բշտերի շուրջ պնդացած է, լեղածորանները լայնացած են և լցված լեղինով	Ամուր է, հարթ	Էխինոկոկերի բշտերին շրջապատող հյուսվածքը սեղմված է և ատրոֆիայի ենթարկված
Հոտը	Յուրահատուկ է	Թեթևակի նեխսահոտ	Յուրահատուկ է	Յուրահատուկ չէ

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ զգայորոշմամբ ստացված ցուցանիշները չեն կարող բացասական ազդեցություն չունենալ Ենթամթերքների որակի վրա: Սակայն, հաշվի առնելով այն հանգանակը, որ զգայաբանական հետազոտությունը իր մեջ կրում է սուբյեկտիվություն, սանիտարական գնահատման մոտավորություն և չի կարող տալ վերջնական կարծիք՝ մերքի սննդային արժեքի ու օգտագործման վերաբերյալ, նպատակադրությանը համապատասխան կատարել նաև էխինոկոկոզի հիվանդ խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների չափը և թոքերի լաբորատոր հետազոտություն:

3.6 . Կարնաթթվի և pH-ի փոփոխություններն առողջ և էխինոկոկոզով վարակված խոշոր եղջերավոր կենդանիների և ոչխարների Ենթամթերքներում

